ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2014թ. հոկտեմբերի 7 թիվ 101-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով , Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Մուղնու Մ.Աշճյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նախագահի 2014 թվականի հոկտեմբերի 6-ի գրությունը **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության խորհուրդների կազմը հաստատելու մասին>> թիվ 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 6-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Մուղնու Մ.Աշճյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում <<Կարինե Գրիգորյան>> և <<Ռուզաննա Սիմոնյան>> բառերը համապատասխանաբար փոխարինել <<Էսմերալդա Ղազարյան>> և <<Քրիստինե Արշակյան>> բառերով:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ